# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

05.07.2024 10:00

Հարգելի՛ հայրենակիցներ, գործընկերներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և պետական խորհրդանիշների օրվա կապակցությամբ:

Այս օրը առիթ է վերստին փաստելու, որ 1995 թվականից ի վեր, հուլիսի 5-ը հայկական տոնացույցում առանցքային նշանակություն ունի:

Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ Սահմանադրությամբ երաշխավորված է նաև Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր քաղաքացու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Մայր օրենքով երաշխավորված է նաև անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը:

Սահմանադրության տառը, ոգին և ամբողջ գաղափարախոսությունն ինքնին մեր անկախ պետականության երաշխիքն է:

Մայր օրենքի գերակայության ապահովումն արժևորում է նաև մեր կատարած ամենօրյա աշխատանքը:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս խորհրդանշական օրվա առթիվ՝ մաղթելով խաղաղություն, ամրություն և բարօրություն մեր պետությանը:

***Սիմոն Բաբայան***

***ՀՀ փաստաբանների պալատի նախագահ***

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })